

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

**«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ**

**1. ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ.**

1.1. «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունումն անհրաժեշտ է հետևյալ պատճառներով.

1.2. Ներկայումս Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից հաճախորդի բացած արժեթղթերի հաշիվների, ինչպես նաև արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ տեղեկատվությունը (այսուհետ՝ արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվություն) համարվում է ծառայողական գաղտնիք և ենթակա է բացահայտման միայն «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված սահմանափակ դեպքերում:

1.3. Մասնավորապես, **իրավապահ մարմիններին** արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է միայն Քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան ընդունված դատարանի որոշման հիման վրա: Այդպիսով, մինչդեռ սահմանափակ պատասխանատվության ընկերությունների մասնակիցների և կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը իրավապահ մարմիններին ամբողջությամբ հասանելի է, բաժնետիրական ընկերությունների մասնակիցների և կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է միայն շատ սահմանափակ դեպքերում և միայն դատարանի որոշման հիման վրա: Նշվածը խոչընդոտում է կոռուպցիոն և այլ տնտեսական բնույթի հանցագործությունների արդյունավետ բացահայտմանը, քանի որ քրեական վարույթն իրականացնող մարմինը զրկված է կազմակերպությունների փոխկապակցվածությունը, ինչպես նաև արժեթղթերով կատարված գործարքներն ուսումնասիրելու և ըստ այդմ, հանցավոր սխեմաներն արդյունավետ բացահայտելու հնարավորությունից:

1.4. Հարկային մարմինն բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը Օրենքի համաձայն հասանելի պետք է դարձվեր կենտրոնական բանկի և հարկային մարմնի համատեղ սահմանած կարգով և բովանդակությամբ, սակայն բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը նախատեսված չէ համապատասխան կարգով:¹ Արժեթղթերի վերաբերյալ այլ բնույթի տեղեկատվությունը, մասնավորապես կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը, հարկային մարմիններին հասանելի է միայն դատարանի որոշման հիման վրա: Մինչդեռ, համապատասխան տեղեկատվությունն անհրաժեշտ է հարկային մարմինների առօրյա աշխատանքի իրականացման համար, այդ թվում՝ հարկ վճարողներին փոխկապակցված ճանաչելու և վերահսկվող գործարքների վերհանման, հարկային ռեժիմի ընտրության վերահսկման համատեքստում:

1.5. Հակամրցակցային մարմինն արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայումս հասանելի չէ: Մինչդեռ մրցակցության պաշտպանության կանոնները գործում են տարբերակված ձևով անձանց խումբ հանդիսացող (փոխկապակցված) և անձանց խումբ չհանդիսացող տնտեսվարողների նկատմամբ: Նշված կարգավիճակը պարզելու համար հակամրցակցային մարմինը պետք է ունենա ամենօրյա հասանելիություն կազմակերպությունների մասնակիցների և արժեթղթերով կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությանը:

1.6. Արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը կանոնվել է նաև միջազգային կազմակերպությունների կողմից:

1.7. Մասնավորապես, **Տնտեսական գարգացման և համագործակցության կազմակերպության (ՏՀԶԿ)** 2018 թվականի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի չորրորդ փուլի զեկույցում նշվել է.

«Հայաստանը ձգտում է ընդլայնել կոռուպցիոն իրավախախտումների և այլ ֆինանսական հանցագործությունների մասին հնարավոր տեղեկատվության աղբյուրները, որոնք կարող են օգտակար լինել կոռուպցիոն և այլ հանցագործությունների հետ կապված առավել նախաձեռնողական միջոցներ ձեռնարկելու համար: (...)

... վարկային տեղեկատվությանը, ակտիվների մասին հայտարարագրերին, հարկային տեղեկատվությանը և գույքային փաստաթղթերին հասանելիությունը պահանջում է գործի քննության փաստը երրորդ կողմին հայտնի դարձնել, ինչը կարող է վտանգել ընթացքի մեջ գտնվող քննչական գործընթացը: Կոռուպցիոն հանցագործություններ քննող քննիչների համար տեղեկատվության ուղիղ

¹ Պետական եկամուտների կոմիտե, 17 նոյեմբերի 2010թ., N 2436-ն հրաման և Կենտրոնական բանկի խորհուրդ, 9 նոյեմբերի 2010 թ., թիվ 297-ն որոշում, տե՛ս www.arlis.am/DocumentView.aspx?docid=115262.

հասանելիության այս խոչընդոտները, մեր կարծիքով, անհարկի սահմանափակումներ են».²

1.8. Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է **Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության՝** հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման գլոբալ ֆորումին, որի շրջանակներում.

«Պետությունները պետք է ապահովեն, որ ընկերությունների և այլ առևտրային մարմինների սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի լինի իրենց իրավասու մարմինն: Սեփականատերը ներառում է իրավաբանական սեփականատերերին և իրական շահառուներին (ներառյալ ցանկացած դեպքում, երբ իրավաբանական սեփականատերը գործում է այլ անձի անունից, որպես անվանատեր կամ այլ համարժեք համաձայնության շրջանակներում, այդ այլ անձին), ինչպես նաև սեփականության շղթայի մեջ գտնվող անձանց:»³

1.9. **ՖԱԹՖ** 24-րդ հանձնարարականի Բացատրական մեկնաբանությունների համաձայն՝

«Իրավասու մարմինները և, մասնավորապես, իրավապահ մարմինները պետք է անհրաժեշտ բոլոր լիազորություններն ունենան համապատասխան կողմերի մոտ պահպանվող՝ ընկերության հիմնական հատկորոշիչների և իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները ժամանակին ձեռք բերելու համար:»⁴

1.10. Նույն փաստաթղթի համաձայն՝ ընկերության հիմնական հատկորոշիչներ են համարվում նաև.

«(․․) բաժնետերերի կամ մասնակիցների ռեգիստրը, որտեղ արտացոլված են բաժնետերերի և մասնակիցների անունները, նրանցից յուրաքանչյուրին պատկանող բաժնետոմսերի քանակը և բաժնետոմսերի տեսակները (այդ թվում՝ յուրաքանչյուր տեսակի գծով քվեարկելու իրավունքների բնույթը):»⁵

1.11. Վերը բարձրացված խնդիրը լուծելու նպատակով Արդարադատության նախարարության կողմից մշակվել է նախագծերի փաթեթ, որի նպատակն է իրավապահ մարմիններին, Պետական եկամուտների կոմիտեին և Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին տալ հասանելիություն Կենտրոնական դեպոզիտարայում առկա՝ արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվությանը:

² Հակակոռուպցիոն բարեփոխումները Հայաստանում, Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի չորրորդ փուլ (2018), 140.

³ Exchange of Information on Request: Handbook for Peer Reviews 2016–2020, OECD, 3rd edition, 19.

⁴ ՖԱԹՖ, հանձնարարական 24-ի բացատրական մեկնաբանություն (իրավաբանական անձանց թափանցիկությունը եվ իրական շահառուները), կետ 12.

⁵ *Ibid*, կետ 4 (բ).

1.12. Արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության նմանօրինակ կարգավորումներ են պարունակում նաև **այլ երկրների** օրենսդրական ակտեր:

1.13. **Ուկրաինայի** Ղեպոզիտար համակարգի մասին օրենքի 25-րդ հոդվածի⁶ համաձայն՝ ղեպոզիտար գրանցման համակարգում առկա տեղեկատվությունը գրավոր հարցման հիման վրա տրամադրվում է դատարանին, դատախազությանը, Ազգային անվտանգության ծառայությանը, Ներքին գործերի նախարարությանը, Ազգային ոստիկանության օրգաններին և ստորաբաժանումներին, Ազգային հակակոռուպցիոն բյուրոյին, Մենաշնորհի դեմ պայքարի կոմիտեի օրգաններին, Ազգային հարկային ծառայության օրգաններին, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմնին և այլ մարմիններին:

1.14. **Գերմանիայի Ղաշնային Հանրապետության** Արժեթղթերի շուկայի մասին օրենքի 17-րդ հոդվածի հիման վրա՝ արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ անձնական տվյալները, փոխանցվում են Գերմանիայի հակամրցակցային մարմնին վերջինիս կողմից իր լիազորություններն իրականացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված:⁷ Նույն օրենքի 21-րդ հոդվածի հիման վրա՝ գաղտնիության պարտականության խախտում չի համարվում օրենքով նախատեսված մարմիններին, այդ թվում՝ իրավապահ մարմիններին, դատարանին, հարկային մարմիններին, տեղեկատվություն տրամադրումը՝ վերջիններիս կողմից իրենց գործառույթներն իրականացնելու նպատակով:⁸

1.15. **Սլովակիայի** Արժեթղթերի և ներդրումային ծառայությունների մասին օրենքի 109-րդ և 110-րդ բաժինների համաձայն՝ կենտրոնական ղեպոզիտարիան պարտավոր է տրամադրել արժեթղթերի սեփականատերերի և բաժնետերերի, հաճախորդի հաշվին առկա արժեթղթերի վերաբերյալ և արժեթղթերին առնչվող օրենքում նշված այլ տվյալներ, ի թիվս այլնի, իրավապահ մարմիններին, ոստիկանությանը, հարկային և մաքսային մարմիններին, հարկադիր կատարման մարմիններին:⁹

1.16. **Խորվաթիայի** հարկային մարմինները ձևավորել են համակարգ, ինչի օգտագործմամբ կարողանում են ուղիղ հասանելիությամբ ստանալ սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվություն դրանք տիրապետող վեց մարմիններից, այդ թվում՝ արժեթղթերի և դիվիդենդների վերաբերյալ տեղեկատվությունը, որը տիրապետում է Կենտրոնական ղեպոզիտարիան:¹⁰

⁶ Закон Украины О депозитарной системе Украины от 06.07.2012 № 5178-VI, Статья 25, օրենքն առցանց հետևյալ հղումով՝ https://kodeksy.com.ua/ka/o_depozitarnoj_sisteme_ukrainy.htm .

⁷ Gesetz über den Wertpapierhandel (Securities Trading Act), « 17 Cooperation with other authorities in Germany, օրենքն առցանց հետևյալ հղումով՝ www.gesetze-im-internet.de/wphg/.

⁸ Ibid, « 21 Duty of confidentiality.

⁹ Act on Securities and Investment Services of 9 November 2001, 566/2001 Coll, օրենքն առցանց հետևյալ հղումով՝ www.noveaspi.sk/products/lawText/1/52130/1/2?rem=tax×lice=null.

¹⁰ Global Forum on Transparency and Exchange of Information for Tax Purposes: Croatia 2019 (Second Round) Peer Review Report on the Exchange of Information on Request: Peer Review Report on the Exchange of Information on Request, OECD, 38.

1.17. **Ֆրանսիայում** ֆինանսական հաստատությունները, որոնք կառավարում են բաժնետոմսեր, պարտատոմսեր կամ կանխիկ գումար պարտավոր են ամսական կտրվածքով կազմել հաշվետվություններ ցանկացած բնույթի հաշիվների բացման, փոփոխման և փակման վերաբերյալ: Այս տեղեկատվությունը պահվում է էլեկտրոնային տվյալների բազայում, որը օգտագործվում է Ֆրանսիայի հարկային մարմինների կողմից ուսումնասիրության, վերահսկողության և հավաքագրման նպատակներով:¹¹

1.18. Ավելին, տարբեր երկրների օրենսդրության զարգացումը ցույց է տալիս, որ գերակայություն է տրվում տեղեկատվության **ուղիղ հասանելիության** մեխանիզմներին:

1.19. **ՏՀԶԿ** 2000 թվականի տվյալներով բազմաթիվ երկրներում ֆինանսական հաստատություններն ավտոմատ կերպով հարկային մարմինն ներկայացնում են հաշվետվություններ հաշիվների բացման/փակման, վճարված տոկոսադրույքի և այն ստացող անձի, տարվա ավարտի դրությամբ հաշիվների մնացորդի և այլ տվյալների վերաբերյալ:¹² Տեղեկատվության լայն ծավալների տրամադրում ապահովող բանկերի ցանկում են Դանիայի, Շվեդիայի և Ֆրանսիայի բանկերը:¹³

1.20. Ավելին, 2018 թվականի **Եվրոպական հանձնաժողովի** աշխատակազմի կողմից իրականացվել է ուսումնասիրություն՝ ուղղված հանցագործությունների կանխարգելման, բացահայտման, քննության նպատակով ֆինանսական տեղեկատվության հասանելիության դյուրինության ապահովմանը, որը փաստում է, որ իրավապահ մարմինների սահմանափակ հասանելիությունը ֆինանսական տեղեկատվությանը բացառում է վերջիններիս գործունեության արդյունավետությունը:¹⁴ Մասնավորապես, իրավապահ մարմինները տեղեկատվություն ստանալու համար ուղարկում են հարցումներ, որոնք ժամանակատար են, և մինչև դրանց պատասխանների ստացումը այդ տեղեկատվության արդիականությունը կորչում է: Բացի այդ, իրավապահ մարմիններին հասանելի է դառնում ֆինանսական հսկողություն իրականացնող մարմինների կողմից ընտրված և ոչ սկզբնական վիճակ ունեցող տեղեկատվություն, որը կարող է չպարունակել բոլոր անհրաժեշտ տվյալները:

1.21. Ուստի, նշված ուսումնասիրության արդյունքում 2019 թվականի հունիսի 20-ին **Եվրոպական հանձնաժողովը և Եվրոպական խորհրդարանն** ընդունել են (EU) 2019/1153 դիրեկտիվը, որը պարտավորեցնում է անդամ երկրներին ապահովել, որ

¹¹ Improving Access to Bank Information for Improving Access to Bank Information for Tax Purposes Tax Purposes, OECD (2000), 36, para 79.

¹² *Ibid*, 72.

¹³ *Ibid*.

¹⁴ Commission Staff Working Document Impact Assessment, Accompanying the document Proposal for a Directive of the European Parliament and of the Council on laying down rules facilitating the use of financial and other information for the prevention, detection, investigation or prosecution of certain criminal offences and repealing Council Decision 2000/642/JHA, Strasbourg, 17.4.2018, 2.1.1. Law enforcement authorities' lack of or delayed access to financial information, փաստաթուղթն առցանց հետևյալ հղումով՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:52018SC0114&from=EN>.

տվյալ երկրի ազգային իրավասու մարմինները ունենան «լիազորություն անմիջականորեն և անմիջապես որոնել բանկային հաշվի վերաբերյալ տեղեկատվություն, երբ դա անհրաժեշտ է իրենց առջև դրված խնդիրների կատարման շրջանակներում՝ ծանր հանցագործությունը կանխելու, հայտնաբերելու, հետաքննելու կամ հետապնդելու կամ ծանր հանցագործությանը վերաբերող քրեական հետաքննությանը աջակցելու համար, ներառյալ այդպիսի հետաքննության հետ կապված ակտիվների նույնականացումը, հայտնաբերումը և սառեցումը»:¹⁵

1.22. Վերոգրյալից հետևում է, որ առկա է հարկային չարաշահումների և հանցավորության կանխարգելման նկատառումներով իրավասու մարմիններին ֆինանսական տեղեկատվության հասանելիությունն առավել դյուրին դարձնելու գլոբալ միտում:

1.23. Վերը նկարագրվածը ցույց է տալիս, որ իրավասու պետական մարմիններին հաճախ հասանելի է բավականին լայն ծավալի տեղեկատվություն, որը թույլ է տալիս վերջիններիս լինել ավելի նախաձեռնողական հանցավոր սխեմաների և հարկային չարաշահումների բացահայտման հարցերում: Առավել լայն տեղեկատվության հասանելիությունը ենթադրում է առավել արդյունավետ ուսումնասիրության և վերահսկման գործիքներ, որոնք կարևոր են հատկապես կոռուպցիայի դեմ պայքարում:

1.24. Արժեթղթերի վերաբերյալ տեղեկությունների ուղիղ, այդ թվում՝ էլեկտրոնային համակարգին հասանելիության միջոցով հասանելիությունը կարևոր է նաև իրավասու մարմինների գործունեության ծախսերը և ժամանակատարությունը նվազեցնելու, իրավասու մարմնի աշխատանքի համար արդիական և արժանահավատ տեղեկատվության ապահովման նպատակով:

2. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ

2.1. Նախագծերի փաթեթով առաջարկվող փոփոխություններն ուղղված են ապահովելու Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից հաճախորդի բացած արժեթղթերի հաշիվների, ինչպես նաև բաժնետոմսերի և դրանց սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությանը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը, Տնտեսական

¹⁵ Directive (EU) 2019/1153 of the European Parliament and of the Council of 20 June 2019 laying down rules facilitating the use of financial and other information for the prevention, detection, investigation or prosecution of certain criminal offences, and repealing Council Decision 2000/642/JHA, Article 4(1), փաստաթուղթն առցանց հետևյալ հղումով՝ <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:32019L1153&from=EN>

մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին և Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը: Միաժամանակ, նախագծերի փաթեթով նախատեսվում է վերացնել քրեական հետապնդման մարմինների կողմից վերոնշյալ տեղեկատվությունը ստանալու համար դատարան դիմելու պահանջը, ինչպես նաև՝ Պետական եկամուտների կոմիտեի կողմից այդ տեղեկատվությունն ստանալու համար նախատեսել առավել արդյունավետ երաշխիքներ:

3. ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐԳՐԱԿՎԱԾ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ և ԱՆՁԻՔ

3.1. Նախագիծը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

4.1. «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման արդյունքում իրավասու պետական մարմինները կունենան հասանելիություն Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից հաճախորդի բացած արժեթղթերի հաշիվների, ինչպես նաև բաժնետոմսերի և դրանց սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ տեղեկատվությանը, ինչը նրանց գործունեությունը կդարձնի առավել արդյունավետ, թույլ կտա առավել համակարգված դարձնել հարկային, կոռուպցիոն, տնտեսական հանցագործությունների դեմ պայքարը: